Հավելված
ՀՀ կառավարության 2013 թ.
նոյեմբերի 21 -ի նիստի N 48
արձանագրային որոշման

ՀՀ ֆինանսների նախարարություն
Մելիք Ադամյան փողոց 1,
Երևան 0010, Հայաստան
Ֆաքս: +374 10 52 42 82

ՀՀ ՏԿՆ ջրային տնտեսության պետական
կոմիտեի նախագահի տեղակալ
պրն Գագիկ Խաչատրյանին
Վարդանանց 13 ա, Երևան 375010, Հայաստան
Ֆաքս: +374 10 54 09 09

LE d 4 Հայ-գերմանական ֆինանսական համագործակցություն
Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր I և II Աջակցող միջոցառում
BMZ No. 2007 70 214

Լրացուցիչ ֆինանսական համաձայնագրի նախնական ֆինանսավորում 2013թ.-ի մայիսի 31

Հարգելի պարոնայք,
Հղում ենք անում 2008թ.-ի նոյեմբերի Ֆինանասական համաձայնագրի 2013թ.-ի մայիսի 13-ի Լրացուցիչ ֆինանասական համաձայագրին, ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի՝ <<Շիրակ-ջրմուղկոյուղի>>, <<Լոռի-ջրմուղկոյուղի>> և <<Նոր Ակունք>> ՓԲ ընկերությունների 2009թ.-ի հուլիսի 14-ին կառավարիչ դարձած MVV decon GmbH / MVV Energy G. AEG LLC կոնսորցիումի հետ միասին ընթացիկ կառավարման պայմանագիրը ֆինանասավորելու համար համաձայն լրացված Հավելված 1 և 2-ի (Կառավարման պայմանագիր) և տեխնիկական աուդիտորի 2010թ.-ի օգոստոսի 2-ի (Ֆիխտներ ՓԲԸ) և 2010թ.-ի հուլիսի 17-ի ֆինանսական աուդիտորի (Գրանդ Տորոնտոն ՓԲԸ) համապատասխան պայմանագրերը:
Համաձայն այն հանգամանքի, որ Ֆինանսական համաձայնագրի բոլոր ֆինանսական միջոցները վճարված են, իսկ Լրացուցիչ ֆինանսական համաձայնագիրը ուժի մեջ չի մտել, քանի որ 2012թ.-ի միջկառավարական համաձայնագիրը դեռևս չի ստորագրվել, KfW_ն առաջարկում է հետևյալը՝

Կառավարման պայմանագրով սահմանված ՋՏՊԿ-ի վճարման պարտականությունները և Աուդիտորի պայմանագրերը պետք է նախաֆինանսավորվեն Գերմանիայի Ֆեդերալ Հանրապետության հետ ֆինանսական համագործակցության ուսումնասիրությունների և փորձագետների հատուկ հիմնադրամից դուրս մինչև 500 հազար Եվրո ընդհանուր արժեք գումարով (<<Նախաֆիանսավորման ծախսեր>>): Նախաֆինանասավորման այն չափը, որքանով որ կատարվի, այդքանով էլ կհանվի Լրացուցիչ ֆինանսական համաձայանգրով նախատեսված ֆինանսական հատկացումից:

Այդ պատճառով, հենց որ Լրացուցիչ ֆինանսական համաձայնագիրն ուժի մեջ մտնի, փոխհատուցման ոչ մի պահանջ չպետք է լինի, քանի որ նման փոխհատուցումը արդեն համարվում է կատարված՝ հատուկ <<Նախաֆինասավորման ծախսերով>> մինչև 500 հազար Եվրո ընդհանուր արժեքով փաստացի նախաֆինանսավորված և փոխհատուցված համաձայն այս նամակի:

Ֆինանսական համաձայնագրի Հոդված 5-ի դրույթները (Ծախսեր և հանրային վճարներ), Հոդված 6-ը (պայմանագրային դրույթներ և ներկայացուցչական իրավասություն), Հոդված 8.1, 8.2, 8.3 և 8.4 (այլ) պետք է կցվեն այս նամակին համապատասխանաբար:

Հարգանքով՝

KfW

Եվա Վիթ
Տնօրեն

Մոնա Ահմեդ
Ծրագրի գլխավոր ղեկավար

Կարդացվել և համաձայնվել է՝

Երևան

……. 2013
ՀՀ ֆինանսների նախարարության
ներկայացուցիչ

…… 2013
ՀՀ ՏԿՆ ջրային
տնտեսության պետական կոմիտեի
ներկայացուցիչ